

# Մեսրոպեան ուղղագրութիւնը վերականգնելու կողմնակիցների ասուլիսի սղագրութիւնը

(ծայնագրիչից)

«Կոնգրէս» հիւրանոց,  
28 յունիսի, 2006 թուական

## Պարոյր Յայրիկեան

- Յարգելի բարեկամներ, թոյլ տուէք սկսել:

Բոլորդ էլ տեղեակ էք, որ սկսուած է «Մէկ ազգ, մէկ մշակոյթ» փառատօնը: Ինքնին անուանուած վիրաւորական կլինի աշխարհի որեւէ ազգի համար, որովհետեւ աշխարհում չկայ ազգ, որ լինի մէկ ազգ եւ ունենա 2-3 մշակոյթ, բայց այս կարգախօսը մեզ ցոյց է տալիս նաեւ, որ մենք որպէս ազգ ունենք խնդիր: Բոլորիդ մօտ բնականաբար հարց է ծագելու՝ «Մէկ ազգ, մէկ մշակոյթ» փառատօնի աւարտից յետոյ որքանով ենք մենք մօտենում մէկ մշակոյթի կայացմանը: Ցանկացած մշակոյթի հիմքում ընկած է ամենից առաջ իր լեզուն, իհարկէ, եթէ ազգի մասին ենք խոսում՝ կա նաեւ քաղաքական մշակոյթ, այսինքն, պետութիւն ունենալու մշակոյթ, որը մեզանում նոր է ձեւաւորվում, դա սահմանադրագիտութիւնն է նաեւ, բայց լեզուն էլ իր հերթին ունի իր առանցքը, լեզուի առանցքը՝ ուղղագրութիւնն է: Այնպէս որ, մի խումբ մտաւորականներ, այս օրերին յատուկ հաւաք գումարելով եւ անդրադառնալով այս հարցին, մի խումբ ասելով՝ բաւական ընդգրկուն, ըստ էութեան «Մէկ ազգ, մէկ մշակոյթ» գաղափարի շրջանակներում մեծագոյն ներդրումն է կատարել այս օրերին:

Ես ուզում եմ ներկայացնել ովքեր են այսօր մասնակցում՝ Մեսրոպեան ուղղագրութեան վերականգնողների միաւորման գումարած առաջին համաժողովը, որ տեղի ունեցաւ «Առնո Բաբաջանեան» համերգասրահում յունիսի 24-ին, մի քանի հոգու պատուիրակել է այսօր այստեղ, որպէսզի ձեզ ներկայացուի կատարուած աշխատանքը: Պատիւ ունեմ ներկայացնելու՝ Արմէն Սիմոնեան, Երիտասարդ Արմէն Սիմոնեանը ոչ միայն լեզուագէտ է, այլ նաեւ համակարգչային մասնագէտ, եւ այն խնդիրը, որի մասին ասում են շատ բարդ խնդիր է, նա արդէն իր ջանքերով, մեծ խմբի մասնակցութեամբ, իրականութիւն է դարձրել: Դուք կարող էք գրել նոյնիսկ անգրագէտ հայերենով եւ համակարգիչը մի քանի վայրկեաններում ձեր գրածը կդարձնի միասնական, դասական ուղղագրութեամբ պատրաստուած տէքստ: Ռաֆայէլ Յամբարձումեանը՝ պատմաբան, նա այդ միաւորման նախաձեռնող եւ հիմնադիր նախագահն է: Լեւոն Չուգասեան՝ Պետական համալսարանի Հայ արուեստի Յունեսկոյի ամբիոնի վարիչ, դոկտոր-պրոֆեսոր: Եւ պատիւ ունեմ ներկայացնելու կոմիտասագէտ, խազերը վերծանող, կոմպոզիտոր Արթուր Շահնազարեանին:

Այժմ խօսքը տրամադրուում է պարոն Չագասեանին:

## Լեւոն Չուգասեան

- Մեսրոպեան ուղղագրութեան խնդիրը, ես ուզում եմ դուք յստակ մտապահէք սա, լեզուաբանական, քերականական հարց չէ միայն: Դա, իր ամբողջութեան մէջ, մշակութային խնդիր է: Դա մարդու մտածելու ձեւն է: Մարդը մտածում է որպէս ամբողջական հայ, նա իր մէջ խտացնում է ամբողջ հայ մշակոյթը 1500 տարուայ, թէ նա բաւարարում է միայն խորհրդային Հայաստանի մշակոյթը վերցնելով իբրեւ հիմք: Այ սա մտապահէք, որն է հիմքը՝ միայն խորհրդային Հայաստանի մշակոյթը, թէ 1500 տարուայ մշակոյթը, անշուշտ ներառելով նաեւ խորհրդային Հայաստանի նուաճումները: Երբ կրում ես 1500 տարուայ մշակոյթը, սա նաեւ ազգային արժանապատուութեան, լիարժէք հայ, ամբողջական հայ լինելու ճանապարհն է: Ազգային արժանապատուութիւնը թոյլ է տալիս լուծել բազմաթիւ խնդիրներ: Ազգային արժանապատուութիւն եւ ազգային ինքնութիւն առանց ամբողջական ուղղագրութեան հնարաւոր չէ պատկերացնել: Ազգային ինքնութիւն նշանակում է՝ դուք լսում էք ազգային երգ, դուք լսում էք հրաշալի բանաստեղծութիւն, դուք լսում էք նորաստեղծ սքանչելի երգեր, որովհետեւ ստեղծողը իր մէջ կրում է ամբողջ մշակոյթը: Այն՝ ինչ մենք այսօր վայելում ենք մեդիայի միջոցով, եւ հեռուստակայանների, եւ մամուլի միջոցով, դժբախտաբար հայ մշակոյթը չի: Դա շատ քիչ չափով է արտայայտում մեր ազգային պատմականօրէն ձեւաւորուած մամուլի հրաշալի աւանդոյթները:

Եթէ ես ձեզ հարցնեմ, դուք լրագրողներ էք, որո՞նք են մեր ամենաընտիր պարբերականները, դուք կարո՞ղ էք պատասխանել: Դուք գիտե՞ք ինչ է «Անահիտը»՝ Արշակ

Չորքանեանի, դուք երբեւէ տեսե՞լ էք «Շանթ» հանդէսը Սկրտիչ եւ Մերուժան Պարսամեանների: Դուք երբեւէ տեսե՞լ էք ընդհանրապէս սփիւռքում եւ տարբեր երկրներում հրատարակուած 100 տարուայ ընթացքում, Պոլսում Արփիար Արփիարեանի «Հայրենիքը» տեսել էք, որ 6 տարի է հրատարակուած: Դրանք մեր պարբերական մամուլի սքանչելի օրինակներն են: Սա մշակոյթ է, սա մտածելու ձեւ է:

Նաեւ նկատի ունեցէք մեր հայերենի որակը, ոսկեղէն հայերենը, որը այդպէս է կոչուել, ուր է հասել այսօր: Ինչի վրայ է խարսխուած այսօրուայ հայերենը: Չմոռանանք, որ նոյնիսկ Ռուսաստանում ամենագեղեցիկ ռուսերեն խօսողները, ակադեմիկոս Լիխաչովը, որը ռուսաստանի խիղճն էր վերջին տասնամեակներում, ամբողջ մտաւորականութիւնը խորհրդային միութեան երդուած էր իր անունով, նա իր ընտիր ռուսերենը սովորել է խորհրդային համակենտրոնացման ճամբարներում իր կողքին նստած ընտիր մտաւորականներից, որոնց պորտը, ինչպէս ասում են, կտրել էին նախկան խորհրդային կարգերը: Ամենաընտիր ռուսագէտներից մէկը Օտտօ Շմիթի որդին, նշանաւոր ակադեմիկոս Զիգմուտ Շմիթը, որ դեռ ողջ է եւ ռուսաց լեզուի մասին հեռուստատեսային հաղորդումներ է վարում, նա փայլուն ուսուցիչներ է ունեցել, որոնք մինչեւ խորհրդային կարգերի ստեղծումն են եղել: Սքանչելի ռուսերենով խօսող Պանչենկոն նոյն ռուսաց լեզուի մասին գրոյցները տանողը: Սրանք բանասիրական գիտութիւնների, պատմութեան, արուեստի, իերնց մշակոյթի կրողներն են եղել: Ուրեմն հնարաւոր չի պատկերացնել մեր լեզուական գեղեցկութիւնը առանց ամբողջականօրէն մշակոյթը կրելու: Ես սա հայտարարում եմ իբրեւ արուեստի պատմաբան, արուեստագիտութեան դոկտոր: Մի մարդ, որը իրօք ունեցել է նոյնպէս ուսուցիչներ, ռուս եւ հայ ուսուցիչներ որոնք փայլուն մտաւորականներ են եղել:

Ես ուզում եմ, որ մենք մէկընդմիշտ հիշենք, սա լեզուաբանների մենաշնորհը չէ այս հարցով զբաղուելը, սա մշակութային խնդիր է: Ուզում ենք գոյատեւել, ուրեմն պէտք է մեզ համար իբրեւ զենք ընդունենք մեր միասնական ուղղագրութիւնը:

Ես ուզում եմ կարդալ մեր յայտարարութիւնը, որը «Մէկ ազգ, մէկ մշակոյթ» համահայկական փառատօնին է համապատասխանում: Դուք ամէն օր հաղորդակից էք լինում եւ ինքներդ էլ հրատարակում էք նիւթեր այս մասին, բայց նկատի առէք, սա ճանաչողական երեւոյթ է այս փառատօնը, մարդիկ այցելում են թանգարաններ, մատենադարան, այլ վայրեր, մարդիկ՝ մեր եղբայրները, քոյրերը այցելում են ամենատարբեր համերգների եւ տարբեր հանդիսութիւններ են տեղի ունենում, բայց սա ճանաչողական, որոշ իմաստով մշակութային նշանակութիւն ունի, բայց գործնական խնդիրներ միասնականաձայն, մէկ ազգ, մէկ մշակոյթ դառնալու գործնական քայլեր չեն վերցւում: Միակ գործնական քայլը, որ վերցուած է, Մաշտոցեան ուղղագրութեան կողմնակիցների միութեան համագումարն էր, որը տեղի ունեցաւ այս ամսի 24-ին, շաբաթ օրը, եւ ես ուզում եմ այդ յայտարարութիւնը կադրալ ձեզ:

*Ընթերցւում է յայտարարութիւնը:*

### **Պարոյր Հայրիկեան**

- Մենք մեր հիմնական խօսքն ասացինք: Մեր պարտքն էր իրազէկել հասարակութեանը, քանի որ միջոցառումը տեղի էր ունեցել շաբաթ օրը եւ շաբաթ օրը լրատուամիջոցների համար այնքան հարմար օր չէ:

Եթէ հարցեր կան՝ կ'պատասխանենք, եթէ՝ ոչ, մեր հիմնական խնդիրը մենք արդէն լուծել ենք: Հարցեր տուողներին խնդրում եմ նախապէս ներկայանալ:

### **Լրագրող - «Արմենիա» ՀԸ**

- Ձեր կողմից ներկայացուած փաստարկներով դուք կարելորում էք դասական ուղղագրութեան վերականգնման հարցը, սակայն ունէք նաեւ հակառակ փաստարկներ ներկայացնողներ, եւ կարծես թէ բանակը այնքան էլ փոքր չի, այ ինչպէ՞ս պիտի վարուեն այն մարդիկ, որոնք տարիներ շարունակ գրում, սովորում եւ գիտական աշխատութիւններ ունեն ներկայիս ուղղագրութեամբ, ինչու այդքան խիստ կարելոր է այդ հարցը:

### **Լեւոն Չուգասովեան**

- Եթէ կարելի է, ես պատասխանեմ Ձեզ: Խիստ կարելորի մասին մենք արդէն խօսեցինք: Հարցի առաջին մասը, ես ուզում եմ, որ յստակ լինի Ձեզ համար, երբեք մեծամասնութիւնը չի կարող ճիշտ որոշում կայացնել առաջնորդելու համար ժողովրդին, սա մէկ, թէեւ գոյութիւն ունի «Չայն բազմաց՝ ձայն Աստօոյ» խօսքը, երկրորդ՝ նկատի ունեցէք, որ դուք, այստեղ

Ոստաներդ, ինչպես յուրաքանչիւր մարդ, երբ որոշում է կայացնում որեւէ լեզու սովորել, նա այդ լեզուն սովորում է միշտ բառարանից օգտուելով: Այսինքն, հնարաւոր չի որեւէ լեզուի տիրապետել առանց բառարանի, եւ եթէ դուք ձեր գործի մէջ առանց բառարանի էք յուլա գնում, թեկուզ հայերեն գրաւոր խօսքը շարադրելիս, դա ուրեմն բաւարար չի, որովհետեւ լեզուն պահանջում է մշտական շփում բառարանի հետ: Նաեւ նկատի ունեցէք, որ երբ որեւէ լեզու էք սկսում սովորել, ենթադրենք՝ Ֆրանսերեն, ամենաընդունուած դասագիրքը՝ Մորժեի դասագիրքը կոչւում է՝ «ֆրանսերեն լեզուի եւ քաղաքակրթութեան դասընթացներ», նոյնը օտար լեզուի բոլոր դասագրքերն են: Դրանք ծանօթացնում են քաղաքակրթութեան հետ, տէքստերը պատմում են պատմութեան մասին, մշակոյթի մասին եւ այլն: Հիմա պատկերացրէք, որ հայ մարդը հայերեն է սովորում իր հողի վրայ, եւ նրա հայերենի բառապաշարը, բառագանձը սահմանափակուած է ընդամենը այն մասով, որ մասը որ մատուցում է, եթէ նա սկսում է Մեսրոպեան ուղղագրութիւնից օգտուել եւ օգտուել բառարաններից, որոնք իրենց մէջ խտացնում են մեր աւանդական ուղղագրութեամբ գրուած բառերը, ասենք Հայկազեան մեծ բառարանից, եթէ այդ բառարանից է օգտւում, ուրեմն նա մշակութային առաջընթաց է ունենում, նա նաեւ սովորում է, օրինակ նայում է դրասանգ բառը, նա պէտք է հասկանայ, թէ դրասանգը ինչ է: Ուրեմն առանց բառարանի ոչ հայերենին տիրապետել, ոչ էլ որեւէ օտար լեզուի հնարաւոր չէ, բայց մեր բառարանները հիմնականում, այն ինչ որ ստեղծուել է Մխիթարեան միաբանութեան ջանքերով, Հայկազեան բառարանը նկատի ունեն, կամ այն բառարանները, որոնք տարբեր մարդիկ նաեւ Մխիթարեանները ստեղծել են՝ անգլերեն-հայերեն, ֆրանսերեն-հայերեն, գերմաներեն-հայերեն եւ հակառակը, Մալխասեանցը, դրանք իրենց մէջ խտացնում են ամբողջ հայ բառագանձը եւ ժողովուրդը չի օգտւում այդ բառարաններից: Ինչու մենք հաշուի չառնենք, որ մենք ունենք ահռելի մեծ միջազգային անուն ունեցող՝ Հրաչեայ Աճարեան, Մալխասեան այսպիսի բառարանագրեր եւ լեզուաբաններ եւ հաշուի առնենք այն մարդկանց կածիքը որոնք, դժբախտաբար, դրսում որեւէ միջազգային գիտաժողովում չեն կարող լեզուաբանական ելոյթ ունենալ որեւէ օտար լեզուով: Ես ցաւով եմ ասում, որ մեր լեզուաբանների բանակի մէջ շատ քիչ մարդիկ, օրը ցերեկով, ճրագով կարող ես փնտրել մարդիկ, որոնք լեզուաբան լինելով, որեւէ օտար լեզուով չեն կարող գիտաժողովում հանդէս գալ: Սա մեր մշակութային կորուստն է, որովհետեւ դժբախտաբար Աճարեանի եւ Մալխասեանի աւանդոյթներով չեն կողմնորոշւում եւ առաջնորդւում:

### **Ռաֆայէլ Յամբարձումեան**

- Ես կուզենայի ի նկատի ունենայիք պատմութիւնը: Երբոր տեղի ունեցաւ բոլշեւիկեան այդ յեղափոխութիւնը, հիմնական նպատակը եւ նրանց առաջին գործը եղաւ վերացնել ամենը ինչ որ ազգային էր՝ լեզու, կրօն, պատմութիւն: Ամէն ինչ վերացրեցին եւ դրա նպատակներից մէկը, դրսեւորումներից մէկը այս մեր լեզուն էր: Նրանք ուզում էին այս մեր լեզուն վերացնել, հայոց տառերը համարում էին, բոլշեւիկները ասում էին՝ դրանք վեղարաւոր տառեր են: Այսինքն, ստեղծել են հոգեւորականները, չեն ուզում տէրտէր ասել, չնայած այդպէս էին ասում: Ուրեմն դրանց նպատակը դա էր եւ ամենագլխաւորը՝ ուզում էին հայերեն տառերը վերացնել, եւ այդ քայլին անցան նրանք, ասացին անցնում ենք լատինական այբուբենին, բայց նրանց նպատակը ռուսերեն դարձնելն էր, ինչպէս ադրբեջանցիների լեզուն դարձրեցին: Ուրեմն նրանք ուզում էին հայոց տառերը վերացնել եւ այդ ճանապարհի առաջին քայլը եղաւ այդ ուղղագրութեան փոփոխութիւնը: Ահա ամբողջ ճշմարտութիւնը, որ դուք պէտք է իմանաք: Հիմայ, մարդիկ ասում են՝ եկէք մենք ուղղագրութիւնը վերականգնելու մասին բանավէճեր անենք: 80 տարի շարունակ Սովետական կայսրութիւնը ձգտեց ամբողջ աշխարհը փոխել եւ դարձնել այս ուղղագրութեամբ, 80 տարի չկարողացաւ: Ոչ մի հայ մտաւորական, ոչ մի հայ գրող կողմ չի եղել դրան: Այսինքն՝ այդպիսի խնդիր չկայ, ինչպէս հիմայ թուրքերն ասում են Եղեռնի մասին՝ պատմաբանները թող մտածեն: Ինչ մտածեն Եղեռնի մասին, երբ դա եղել է: Նոյնն էլ սրանք են ասում՝ եկէք նստենք, մտածենք, բանավիճենք, տեսնենք թէ այս ուղղագրութիւնը ճիշտ է, թէ չէ: Պարոնայք, մեր խնդիրը հայոց արեւելահայ լեզուն բարբարոսական յարձակումներից փրկելն է: Այդ յարձակումը չընդունեց արեւմտահայ լեզուն, մեր լեզուի երկրորդը, որովհետեւ նրանք դա չուզեցին, չնայած 80 տարի շարունակ դա էին ուզում: Ուրեմն մեր խնդիրը, գերագոյն խնդիրը հայոց լեզուն է, արեւելահայ լեզուն է, վերականգնել նրա ամբողջականութիւնը: Նրա դէմ իրագործուած այդ մեծ յանցագործութիւնը վերացնելն է: Դրա համար մենք ոչ մի քայլ այստեղ չենք ընդունում, որեւէ փաստարկ, որեւէ

վիճաբանութիւն, ինչ-որ ժողովրդին լսել եւ այլն: Մենք վերականգնում ենք այն ինչ-որ եղել է մինչեւ 1922 թուականը: Ահա մեր խնդիրը:

### **Պարոյր Չայրիկեան**

- Մինչ պարոն Շահնազարեանին ձայն տալը, ես ուղղակի յիշեցնեմ մի բան բոլորիս՝ 1991 թուականի սեպտեմբերի 21-ին մեր ժողովուրդը, չխորանալով նրբերանգների մէջ որոշում է ընդունել, հանարքուեով անրագրուած, առաջին անգամ ինքնորոշուելով, որոշել է դուրս գալ Սովետական միութեան կազմից, որ նշանակում է հրաժարուել Սովետական միութեան պարտադրած արժէքներից: Դուրս գալ չէր նշանակում, որ Չայաստանը Սովետական միութիւնից վեր կացաւ գնաց ուրիշ տեղ, դա նշանակում էր հրաժարուել Սովետական միութեան պարտադրած արժէքներից միակուսակցութիւն, Արցախը Ադրբեջանինն է, հայերը չունեն արտաքին քաղաքականութիւն, հայերը չպետք է իրենց ազգային մշակոյթը իրենց պատկերացրած ձեւով զարգացնեն: Այդ ամենից մենք հրաժարուել ենք: Այսինքն՝ հրաժարուել ենք նաեւ 1922 թուականի դեկրետից, եւ դրա վկայութիւնն է 1992 թուականին ընդունուած օրենքը լեզուի մասին: Այսինքն՝ այս հարցին ընդդիմացողները, միասնական ուղղագրութեան վերականգնմանն ընդդիմացողները՝ ընդդիմանում են մեր ժողովրդի բնականոն զարգացումներին ընդհանրապէս եւ, դրա մէջ ամենակարեւոր բանը այն է, որ ծուլութիւնը երբեք չպետք է հիմք դառնայ: Որպէս լեզուագէտներ, ձեր հիմնական մասը բանասէրներ են, այդպէս ասեմ, պատկերացրէք միայն մի քանի բան, ինչքան գեղեցիկ է, երբ օրէնք բառում, սէր բառում, գէտ բառում՝ գիտութիւն, գրուում է է տառը, Աստուծոյ խորհրդանիշ է տառը: Չէ, որ մենք միանգամից տարբերում ենք հոսող ջուրը եւ գիտութիւնը, զգացմունքը, բարձր զգացմունքը՝ սէրը եւ կաթի սերը, ինչքան գեղեցիկ է, երբ յարութիւն բառը գրելիս մենք հասկանում ենք, որ նշանակում է ի ար՝ դէպի Արարիչ: Ուզում են ասել՝ մենք իսկապէս հարստանում ենք, եւ պարոն Խաչերեանը վկայակոչում է, որ 500 բառարմատ ենք մենք կորցրել այս խեղագրութեան պատճառով: Դուք հասկանում էք 500 բառարմատ ինչ է նշանակում: Այժմ ես ուզում եմ, որ նոյն հարցի վերաբերեալ իր տեսակետը յայտնի պարոն Շահնազարեանը:

### **Արթուր Շահնազարեան**

- Ես կասեմ շատ պարզ եւ շատ կարճ: Իբրեւ առողջանութեան մասնագէտ, միջնադարեան երաժշտութեան խազերի մասնագէտ ասեմ, որ այսօրուայ մեր խօսակցութիւնը նոյնիսկ կապ չունի այս ուղղագրութեան հետ: Որ ասում են՝ ինչպէս գրում ենք, այդպէս կարդում ենք կամ խօսում, այդպիսի բան գոյութիւն չունի: Այժեան, ձեզանից ով կարող է ծ-ից յետոյ j արտասանել, ես իբրեւ երաժիշտ եմ ասում: Որեւէ դիրիժորի, խմբավարի հարցրէք: Քուում է այդպէս է: Պատեան, տ-ից յետոյ j եթէ ասէք՝ կլինի պատ-յան, իսկ տյ-ն տալիս է ծ, միջազգային օրէնքներով, դրա համար ժողովուրդը գրում է տ ասում է՝ «պածյան», «հաջողության» ով է թ-ից յետոյ j ասում: Նոյնիսկ ձեզ ասեմ, այ հիմա ունէք մագնիտոֆոն չէ, ձայնագրէք եւ ասէք նուագարան, եւ յետոյ դանդաղացրէք ու լսէք, տեսէք ն-ից յետոյ վ կարող էք ասել: Այսինքն, այս ուղղագրութիւնը, որ ասեմ են ինչպէս խօսում ենք՝ այդպէս գրում ենք, այդպիսի բան գոյութիւն չունի, մենք ուշադիր չենք լսում ուղղակի: Երբ թ-ից յետոյ j են գրում, երեխան կարդում է եւ ստացում է «ցանկուցյուն», եթէ այդպէս է, թող այսօր ց գրեն: Եթէ հիմնական պատճառը բռնում են, որ ինչպէս խօսում ենք այդպէս էլ գրում ենք, թող գրեն «ցանկուցյուն», որովհետեւ թ-ից յետոյ j չէք կարող ասել, եթէ ասէք կլինի շատ կոպիտ, այդ տառերը չեն համապատասխանում իրար:

Ես չեմ ուզում ծաւալուել, կարող եմ ամբողջութեամբ ասել, որ նոյնիսկ մեր ժողովուրդը ինչպէս արտասանում է, ինչպէս արտասանել է՝ այս ուղղագրութիւնը չի համապատասխանում այդ արտասանութեանը, հակառակ ստիպում է, որպէսզի տ-ի փոխարէն ծ ասեն, թ-ի փոխարէն ասեն ց, քանի որ դպրոցից այդպէս սովորում են:

Ասեմ որ չի եղել գիտական բանավեճեր, լեզուաբանական, հնչունաբանական բանավեճ մինչեւ այսօր գիտնականները չեն գումարել: Բանավեճերը ակադեմիկս, գիտնականների, երբեմն դոկտորների կողմից եղել են գիտէք ինչպիսի բանավեճեր՝ «բա որ ես ասում էք էսպէս, բա որ եմ ասում էք էնպէս...», գիտական լուրջ քննարկում ասէք ե՞րբ է հեռուստատեսութեամբ եղել, տերմիններով, առողջանութեան օրէնքներով, քերականների մեր օրէնքներով եւ չեմ ասում կէտադրութեան հարցը, դա առանձին մի խօսակցութիւն է, ես կէտադրութեան փոփոխութիւնը: Միայն ասեմ, որ առաջ կար մի իմաստուն օրէնք, այդպէս է դել մինչեւ 19 դար ամբողջ հայոց մէջ սովորեցնում էին նշանների կէտադրութեան գորութիւնը, միջակէտը ինչ

գորութիւն ունի, բութը, շեշտը, չեն ասում, որ շեշտի 20 տեսակ ենք ունեցել, եւ ասում էին՝ ազատ գործածէք, ըստ ձեր առողջանութեան, մտքի ինչպէս էք հասկանում, գորութիւնը իմացէք, ազատ օգտագործէք: Այսօր մեր երեխաներին ասում են՝ միայն այս, այս դէպքում, թէ ինչու՝ բացատրութիւն չկա: Դա նոյնն է, որ ասեն երեխաներ՝ հենց որ գարուն բառը ձեզ հանդիպեց, եթէ կողքը չգրեցիք սիրուն գարուն, սխալ է ձեր նախադասութիւնը, անպայման պիտի գարուն բառը հանդիպի՝ սիրունը գրէք: Նոյնը մեր կէտադրութեան հետ է կատարուել եւ լեզուն խեղաթոյրուել է երկու առումով՝ հնչունաբանական արտասանութեամբ, առողջանութեան առումով, կէտադրութեան մտածողութեան առումով, քառակուսիի մէջ դրած առումով, եւ այսքանից հետո փառք մեր ժողովրդին: Մենք բողոքում ենք, որ այսօր վատ են խօսում, այո՛, վատ են խօսում: Դեռ ակելի վատ պիտի լինէր այս ուղղագրութեան պատճառով, հնչունները պէտք է լրիւ փոխուած լինէին եւ դեռ այսքան պահպանել է մեր ժողովուրդը:

Փոխելու դէպքում մենք կգանք ճիշտ արտասանութեան եւ դաստիարակութեան, որովհետեւ այս առողջանութիւնը, այս ուղղագրութիւնը ունի իր մէջ դաստիարակութիւն: Սի մարդ, որ իր լեզուն տառերը փոխում է՝ այդտեղից սկսում է ժառգոնը:

### **Պարոյր Յայրիկեան**

- Ես ուղղակի ամփոփելով ուզում եմ ասել հետեւեալը: Այսօրուայ այս խնդրի վերաբերեալ վէճը ուզում եմ շատ խիստ ներկայացնել: Կեանքի ինչ-ոչ փուլում բռնաբարուած կնոջը ասում են՝ գիտես այսուհետեւ դու միշտ պիտի բռնաբարուելով ապրես, իսկ մենք ասում ենք, եղել է, պատահել է, պէտք է դրանից ձեռքազատուել, ապրենք մեր բնականոն կեանքով, եւ այս հարցին հակառակուողները ուղղակի Ստալինի կողմնակիցներն են: Մերոպ Մաշտոց եւ Ստալին կռուում, դուրս է գալիս, որ մեր հասարակութեան մէջ կան մարդիկ, որ հանուն իրենց ծուլութեան, եւ իհարկէ ծախուածութիւնն էլ կա, նրանք կողմ են այն բանին, որ մենք շարունակենք հաւատարիմ լինել Ստալինին:

Մենք հիւր ունենք Ամերիկայի միացեալ նահանգներից՝ բժիշկ Փանոսեան, դոկտոր Խաչերեանի փեսան է:

### **Վաղարշակ Փանոսեան**

- Ես նայում եմ դեմքերին եւ ուզում եմ տեսնել ցաւ զգացող կա՞ լրագրողների մէջ:

### **panarama.am**

- Նշեցիք, որ բոլոր միջոցառումները «Մէկ ազգ, մէկ մշակոյթ» փառտօնի՝ ճանաչողական բնոյթ ունեն, գործնական չեն, ի՞նչ պէտք է անեն այդ փառտօնի կազմակերպիչները, որպէսզի դրանք գործնական բնոյթ ստանան:

### **Լեւոն Չուգասեան**

- Գիտէք ինչ, Ձեր ասածը ենթադրում է համալիր ծարգիր: Այսինքն՝ պէտք է նախապէս խորհրդակցէքն տարբեր մարդկանց հետ, տեղեակ մարդկանց հետ: Սփիւռքի մասնագէտներ, սփիւռքը ճանաչողներ մեզանում դժբախտաբար չկան: Սփիւռքը ինքը իր ճգնաժամն է ապրում եւ գոյատեւման իր կռիւն է մղում: Ուրեմն պէտք էր խորհրդակցէին եւ սփիւռքի մասնագէտների հետ, որոնք շատ քիչ են կամ սփիւռքը իմացողները, նրանք ովքեր շատ են ճամփորդել՝ շատ են եղել սփիւռքում, եւ պէտք էր համալիր ծրագիր կազմուեր, որտեղ քայլ առ քայլ, լինէին ոչ միայն ճանաչողական, այսինքն՝ Մատենադարան այցելութիւնը կամ թանգարաններ անշուշտ շատ կարելոր է, բայց ես նկատի ունենմ, որ հարկաւոր էր գործնական քայլեր մշակել, թէ ինչպէս անենք, որ մենք իրոք միասնական լինենք: Ո՞րն են առաջին քայլերը: Առաջին քայլը դա ուղղագրութիւնն է, երկրորդ՝ դա այնպիսի մի արբանեակային հեռուստատեսութիւն ունենալը, որը իրոք սփիւռք կիեռարծակի հայ մշակոյթը իր ամէն ինչով, ոչ թէ այն արբանեակային հեռուստատեսութիւնը, որը հեռարծակում է այսօր Յայաստանից եւ մի կողմից չի հասկացում սփիւռքում, որովհետեւ շատ վատ լեզուով են խօսում մարդիկ, մյուս կողմից այդ արբանեակային հեռուստատեսութիւնը հայկական ինքնութիւն չունի իր մէջ, չի պատմում հայոց մշակոյթի, հայ ճարտարապետութեան, հայ մանրանկարչութեան, հայոց պատմութեան, հայ կինոյարուեստի, հայ թատրոնի մասին: Դա մի ահաւոր պարունակութիւն ունի, արբանեակային հեռուստատեսութիւնը, որի ստեղծման համար մեծ ջանքեր ներդրուեցին, որպէսզի սփիւռքը ազատուի պատրանքներից, ակելի լաւ ճանաչի հայրենիքը: Դժբախտաբար հեռուստատեսային կայանները բաւարար չափով չեն ներկայացնում սփիւռքը:

Այն ինչը որ մենք տեսնում ենք, դա չի նպաստում մեր միասնականացմանը: Մենք շատ վատ գիտենք միմեանց, մենք պատրանքներով ենք պարուն, մենք բարոյություններով ենք վերաբերում միմեանց, հատուածային մտածողութիւն է գոյացել ուղղագրութեան պատճառով:

Հատուածայինը գիտէք որն է, որ նա ռուսախօս է՝ ես նրա հետ գործ չունենմ, նա անգլախօս է, ֆրանսախօս է՝ նրա հետ գործ չունենմ, սրանք հայ չեն՝ լեզուն չգիտեն, նա պօլսահայ է, սա պարսկահայ է, սա ապարանցի է, սա հայաստանցի է, սա հատուածային մտածողութիւն է: Չի կարող ժողովուրդը այսպիսի հատուածային մտածողութիւն ունենալ, բոլորս մէկ ենք, մի ժողովուրդ ենք, մեր ճակատագրի հետեւանքով ենք ժառանգել այդ վիճակները, բայց պիտի փորձենք դուրս գալ այդ վիճակից, մշակել մի վարքագիծ, մի կանոնագիծ:

### **panarama.am**

- Իսկ կատարումը ինչպե՞ս էք տեսնում այդ նպատակի:

### **Լեւոն Չուգասզեան**

- Քայլ առ քայլ: Ոչինչ մէկ օրում չի ստեղծւում, ծառը աճում է աստիճանաբար, չինական ասացումները ասում է՝ «Մեծ սարերը շարժում են փոքր քարերը շարժելով»:

### **Պարոյր Հայրիկեան**

- Ես նախորդ հարցի վերաբերեալ ընդամենը ասեմ, որ այս միջոցառումը կազմակերպելուց առաջ, բնականաբար, պէտք է իրազէկ մասնագէտները եւ տարբեր ոլորտների մասնագէտներ հաւաքուէքն, յստակեցուէր՝ մեր ժողովուրդը մէկ միասնական ազգ եւ մէկ մշակոյթի տէր լինելու համար ինչ խնդիրներ ունի: Եւ ամենակարեւոր բանը, բոլորդ ուշադրութիւն դարձրէք՝ մեր բոլոր հարեւանները, նախկին Սովետական միութեան հանրապետութիւնները մշում են շատ բարձր մակարդակով իրենց անկախութեան 15-ամեակը: Անկախութեան 15-ամեակի մասին՝ մէկ ազգ, մէկ մշակոյթ դարձնող հիմնական երեւոյթի մասին քանի՞ անգամ խօսուէց: Այսինքն՝ ազգը միասնական է դառնում նախ եւ առաջ իր պետականութեամբ եւ այդ պետականութիւնը որպէս արժէք, այն պետականութիւնը, որը հնարաւորութիւն է տալիս նաեւ այսպիսի միջոցառումներ կազմակերպել, այդ պետականութիւնը ըստ էութեան չի արժեւորվում, որոհետեւ երեկ՝ պահեստապետ, այսօր նախարար դարձած մարդիկ չէ, որ պիտի որոշեն այս հարցերը: Այ, տեսէք իմ կողքին նստած մասնագէտներ, նրանք է, որ պիտի իրենց տեսակէտներն արտահայտէին: Եկեղեցին պառակտուած է, այս հարցը ազգային մշակոյթի հարց է, թէ՛ ոչ: Իհարկէ հարց է, բայց այս հարցերին անդրադարձ չկա:

Ես մեր անունից շնորհակալութիւն եմ յայտնում ձեր ներկայութեան համար:

Ինչ վերաբերում է Ձեր ասածին, որ ասում էք ի՞նչ ճանապարհով՝ մեր համաժողովում այդ հարցին լուրջ անդրադարձներ եղան: Ենթադրում է, որ չնայած այդ հարցը լուծելի է 6 ամսուայ ընթացքում, բայց երեք տարուայ ընթացքում հանգիստ կարելի է անցումը կատարել, աննկատ դարձնելով այդ անցումը նոյնիսկ հակառակորդների համար:

### **«Նոյյան Տապան» լրատուական գործակալութիւն**

- Եի՞շտ է ընտրուած «Մէկ ազգ, մէկ մշակոյթ» կարգախօսը:

### **Պարոյր Հայրիկեան**

- Առայժմ ճիշտ է, բայց ընդհանրապէս դա արտառոցութիւն է, ինչպէս ասես, որ հայը մարդ է կամ վրացին մարդ է: Ազգը իր մշակոյթով է ազգ, եթէ ազգ ես՝ ունես մէկ մշակոյթ, չի լինում ազգը տարբեր մշակոյթներով: Ես փուլի համար, քանի որ այդ խնդիրն ունենք, դա ճիշտ անում է, բայց ընդհանրապէս այդ անունը երեւի նրա համար է, որ մենք վերացնենք այդ գաղափարն ընդհանրապէս